

# ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՑԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

## ՄՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

Բ.Գ.Պ.

ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ

Հովհաննես Թումանյանը իր պատմաբանասիրական աշխատություններում անդրադառնում է դարեր ի վեր հայության շարունակական գաղթի պատմական պատճառներին ու հանգամանքներին: Գրողի մասնավորապես «Երևանի առումը և հայոց պատմությունը» անավարտ ուսումնասիրությունը պատմագիտության, քաղաքագիտության և գրականագիտության միաձուլման հետաքրքիր օրինակ է: Բանաստեղծն օգտագործել է գրականության վիթխարի քանակ՝ սկսած 5-րդ դարի պատմիչներից մինչև Դրասխանակերտցի և Ասողիկ, Լաստիվերտցի, Ուռհայեցի, Դավրիժեցի, Չամչյան: Հայկական սկզբնաղբյուրներից ավելի Թումանյանի հետազոտության գլխավոր փաստագրական հիմքն ու ակունքը եղել են Կովկասի ռուսական նվաճման և Արևելյան Հայաստանի՝ պարսից լծից ազատագրման պատմությունը ներկայացնող բազմաթիվ ռուսական հրատարակություններ<sup>1</sup>: Նկատի ունենալով հայ ժողովրդի զանգվածային գաղթերի պատ-

---

<sup>1</sup> Այդ հարյուրավոր գրքերից են «Кавказский сборник» բազմահատոր մատենաշարի բոլոր հատորների նյութերը, **Ե. Լաչինովի** և կովկասյան արշավանքների այլ մասնակիցների հուշերը, **Վ. Պոստոյի** «Կովկասյան պատերազմը», «Ռուսական տիրապետության հաստատումը Կովկասում», **Պ. Բուսկովի** «Նյութեր Կովկասի նոր պատմության համար», «Մարդկության պատմություն» գրքի համապատասխան գլուխները, **Մ. Ե. Կոցեբուի** «Պարսիկների ներխուժումը Վրաստան 1826թ.» և բազմաթիվ այլ պատմագիտական հետազոտություններ:

մությունը՝ Թումանյանը գրում է. «Շատ քիչ ազգեր են ունեցել էն դաժան ճակատագիրը, որն ունեցել է հայ ժողովուրդը: Նրա պատմության բոլոր էջերն ու շրջանները եղել են անընդհատ հալածանքների ու կոտորածների արյունոտ հանդես: Եվ զարհուրելի էն է, որ էդ ճակատագրի պատճառները պատահական չեն ու վաղանցուկ, այլ մեծ մասամբ մշտական, օրենքների նման. ուստի դրանց հետևանքներն էլ մնում են ու գալիս են անվերջ»<sup>1</sup>: Իսկ հետևանքը գրեթե միշտ եղել է գաղթը: Եվ քանի որ հեղինակը բանաստեղծ է, նրա հետազոտության մեջ կուռ տրամաբանությունը ձուլվում է զգացմունքայնությանը: Գրողի պատմաբանական վերլուծությունները հաճախ են զուգորդվում բանաստեղծական պատկերավոր խոսքով: Հեղինակը ընթերցողի ուշադրությունը սևեռում է այն մակդիրների ու փոխաբերությունների վրա, որոնցով տարբեր ազգեր բնորոշում են իրենց հայերնիքը: «Սրբազան Ռուսիայի», «գեղեցիկ Ֆրանսիայի», «ամենից վեր Գերմանիայի», «ալ կարմիր Օսմանլիի» կողքին հայը իր երկիրն անվանում է «թշվառ Հայաստան», «սպանդարան մարտիրոսաց», «գուլումի երկիր»: Եթե գեղարվեստում Թումանյանի համար բառը մի ամբողջ աշխարհ էր, ապա այստեղ յուրաքանչյուր բառ ներկայացվում է իբրև պատմություն, ազգային բնավորություն. «Բառերը պատմություններ են»<sup>2</sup>: Այդ պատճառով էլ ամենից շատ և իրար ետևից պոետը կրկնում է. «Գաղթե՛լ, գաղթե՛լ, գաղթե՛լ... Բայց սա ուրիշ պատմություն է: Ով գաղթեց գլուխն ազատեց էս դժոխքից,

---

<sup>1</sup> **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, (այսուհետ՝ Թումանյան, ԵԼԺ) հտ 8, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 97:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 175:

պրծավ»<sup>1</sup> : Աշխարհով մեկ սփռված հայությունը գաղթօջախներում փորձում էր պահպանել ազգային ինքնությունը՝ առաջին հերթին իր լեզվի, մշակույթի, ազգային արվեստի ու գրականության զարգացման միջոցով:

Գաղութներում ապրող գրողների և արվեստագետների ստեղծագործություններին Թումանյանն անդրադարձել էր դեռևս «Վերնատան»<sup>2</sup> տարիներին (1899-1904 թթ.): Գրական այդ ասուլիսներում հաճախ էին քննության նյութ դառնում գրական հեռավոր և մերձավոր նախորդների ստեղծագործությունները, ազգային գրականության ավանդույթները, անցյալի արժեքները՝ վերագնահատելու խնդիրները: Այս համատեքստում վերնականները<sup>3</sup>, անդրադառնալով նախորդներին, ձգտում էին սահմանազատվել հատկապես Ռ. Պատկանյանի գրականությունից: Գրական քննարկումներում վճռորոշ էր Թումանյանի կարծիքն ու դիրքորոշումը, ով իր անմիջական նախորդների, այդ թվում Ռ. Պատկանյանի, Դ. Ալիշանի, Ս. Շահազիզի, Մ. Պեշիկթաշյանի

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 172:

<sup>2</sup> «Վերնատունը» ձևավորվել է 1899թ. աշնանը Բեհբուջյան 50, հետագայում 44 հասցեում գտնվող Հովհ.Թումանյանի բնակարանում: «Վերնատան» անդամները հայ գրականության դասականներն էին՝ Ղազարոս Աղայան, Հովհաննես Թումանյան, Լևոն Շանթ, Նիկոլ Աղբալյան, Ավետիք Իսահակյան և Դերենիկ Դեմիրճյան: «Վերնատուն» անունը կապվում էր և՛ ավետարանական Վերնատան Քրիստոսի աշակերտների հավաքատեղիի, նրանցից շնորհ ստանալու, ներշնչվելու խորհրդի, և՛ Թումանյանի տան՝ 5-րդ հարկում գտնվելու հանգամանքի հետ, և՛ **դեպի «Վեր», դեպի կատարելություն ունեցած ձգտման**, «դեպի Վեր» կարգախոսի հետ: «Վերնատուն» գրական խմբակի դերը նշանակալից է թե՛ հայ գրականության և թե՛ 20-րդ դարասկզբի հայ մշակույթի պատմության մեջ: Ավելի հանգամանորեն տե՛ս **Հովհաննիսյան Ս.Գ.**, «Վերնատուն», Եր., 2018, «Էդիթ Պրինտ» հրատ. 288 էջ:

<sup>3</sup> «Վերնատան» անդամները կոչվում էին «վերնականներ», կամ «վերնատունյաններ»: Տե՛ս **Դեմիրճյան Դ.**, ԵԺ 14 հատորով, հտ. 12, Եր., ԳԱ հրատ., 1985, էջ 170:

գրականությունը համարում էր գաղութների, պանդխտության ու հալածանքի գրականություն: Բանաստեղծի ընկալմամբ գաղթօջախներում ապրող գրողները ոչ իրենց մեղքով չէին կարող հայության վիճակի, համաժողովրդական ցավի արտահայտիչը լինել, քանի որ **«օտար երկրում բուսած մի ծաղիկ չի կարող իր երկրի շունչն ու փարթամությունը ունենալ, մի մարդ, որ իր երկիրը չի տեսել, նա չի կարող այդ երկրի իսկական պատկերը տալ»**<sup>1</sup>:

Հայ գրականությունն ու մշակույթը զարգանում էին ոչ միայն հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս, հեռավոր գաղթօջախներում, երբեմն շատ ավելի գաղթօջախներում, քան հայրենիքում: Գաղթօջախներում ստեղծագործած հայ գրողների մասին Թումանյանը հիշատակում է նաև Թիֆլիսի ժողովրդական համալսարանի պարապմունքներին կարդացած «Կյանք և գրականություն» դասախոսության մեջ: Նա գրողի արվեստը մեկնում է կյանքի հանգամանքների հետ սերտ առնչակցության մեջ. «Որքան շրջապատը լայն է ու ընդարձակ, բազմակողմանի ու բազմաբովանդակ, այնքան մեծ է գրողը ու նրա շրջահայացը, նույնքան մեծ ու հարուստ է նաև գրականությունը»<sup>2</sup>:

Այս ելակետից քննելով խնդիրը՝ Թումանյանն իր ելույթներում նույնպես անդրադառնում է հայության տարագրության պատմությանը՝ նկատելով, որ դարեր շարունակ տանջանքն ու բռնությունն են ստիպել հային հեռանալ իր հող ու ջրից, բուն երկրից՝ հայրենիքից: Եվ միայն հեռանալուց հետո են հանգիստ շունչ առել: Սակայն օտար միջավայրը չէր կարող իր ազդեցությունը չթողնել այնտեղ ստեղծվող գրականության վրա: Ի վերջո, բանաստեղծը հանգում է տխուր եզրա-

---

<sup>1</sup> Թումանյան, ԵԼԺ, հտ. 6, Եր., 1994, էջ 532:

<sup>2</sup> Նույն տեղում:

կացության. «Տարագիր, պանդուխտ ժողովրդի գրականությունն էլ, անշուշտ, պիտի լիներ պանդխտության ու հալածանքի գրականություն: **Պանդուխտ ժողովուրդ, պանդուխտ գրականություն**»<sup>1</sup> :

Այնուհետև բանաստեղծը համեմատում է Ռափայել Պատկանյանի (Գամառ Քաթիպա) և Ղազարոս Աղայանի ստեղծագործությունը՝ ընդգծելով վերջինիս՝ հայկական իրականությանը ավելի հարազատ պատկերները: Երբ Պատկանյանի գուղացին է գալիս դաշտից, նա տեսնում է ճոխ սեղան, սպիտակ, փափուկ զարեհաց, խորոված, և այդ ամենը ձեռագործ գեղեցիկ սուփրայի վրա: Մինչդեռ Աղայանի «Սերմնացան» և այլ ոտանավորները ներկայացնում են իրական կյանքը:

20-րդ դարասկզբին Ռ.Պատկանյանին վերագրում էին ազգային բանաստեղծի հիմնադրի դերը: Այդ կարծիքները հնչում էին հենց Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթներում, որի նախագահն էր Թումանյանը: Բանաստեղծը նրանց հակադարձում է. «Այո՛, Գամառ-Քաթիպան անպայման տաղանդավոր մարդ է, բայց եթե նա քիչ է ազգային բանաստեղծ, էդ պակասությունը իրենը չի, տաղանդի պակասությունը չի, այլ հանգամանքների, ինչպես և իմը չի են առավելությունը, որ ես ավելի եմ ազգային, այլ դարձյալ հանգամանքներինը»<sup>2</sup> : Այս խոսքերը Թումանյանը գրում է 1916թ. օգոստոսին Յուլակ Խանզաղյանին և առանց կեղծ համեստության իր անունը համադրում է Պատկանյանի անվան հետ: Նա հստակ տեսնում էր գրականության պատմական զարգացման տրամաբանությունը և հասկանում էր, որ պատկանյանական փուլն արդեն անցյալում է, իսկ հաջորդ փուլի գլխավոր դերակատարն ինքն է:

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> **Թումանյան**, ԵԼԺ, հտ. 10, Եր., 1999, էջ 250:

Հովհ. Թումանյանը, նկատի ունենալով մեր գրականության երկփեղկվածությունը, հայ գրականագիտության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ դրեց **տարաշխարհիկ (կամ գաղութային) և բնաշխարհիկ** գրականություն եզրույթները: Նրանից առաջ դեռ ոչ ոք հստակ չէր խոսել գաղթօջախներում ու հայրենիքում ստեղծվող գրականության առանձնահատկությունների մասին, որոնք այսօր էլ չեն կորցրել ոչ միայն իրենց պատմական, այլև արդիական նշանակությունը: Բանաստեղծի շատ մոտեցումներ այսօր էլ կարող են վերաբերել տարբեր գաղթօջախներում ստեղծվող սփյուռքիայ գրականությանը:

**Տարաշխարհիկ**, պանդուխտ գրողներն ավելի աչքի էին ընկնում իրականության քնարական, ռոմանտիկական ընկալմամբ: Տարաշխարհիկ գրականության ներկայացուցիչներ Թումանյանը համարում էր Ռափայել Պատկանյանին, Սմբատ Շահագիզին, Ղևոնդ Ալիշանին: **Բնաշխարհիկը** «ծնվում և սնվում է մայրենի հողի վրա, մայրենի միջավայրում»<sup>1</sup>: Հենց այդ գրականությունն է իր հետ բերում հայ ազգային կյանքի, տառապանքի և ձգտումների ճշմարտացի պատկերը, ի գործ է ժողովրդի հետ խոսել նրան հարազատ լեզվով ու պատկերներով: Բնաշխարհիկ գրողները՝ Խաչ. Աբովյանից սկսած, ներկայացնում են իրական դժոխքը հայրենի հողի վրա:

1913թ. մայիսի 16-ին Հայ գրողների կովկասյան ընկերության 15-րդ երեկույթում, որը նվիրված էր Գամառ Քաթիպային, Թումանյանը, իր ելույթում նշելով Պատկանյանի լեզվական սխալները և անձանորությունը հայ կյանքին, բնորոշում է տարաշխարհիկ գրականությունը, որը «կտրված հայրենիքից, զարգանում է օտար երկնքի տակ՝

---

<sup>1</sup> Նույն տեղում, հտ. 7, Եր., 1995, էջ 532:

հայ գաղութներում»<sup>1</sup>. միաժամանակ ընդծում է, որ օտարության մեջ ապրող հեղինակները. «Հայրենասպիրության միշտ մեծ կորով են երևան բերել...բայց հենց որ նրանք վերացական մտքերից դիմում են հայ կյանքի կոնկրետ ձևերին, անմիջապես ցույց են տալիս իրենց անձանդությունն այդ կյանքին»<sup>2</sup>: Գրական-գեղարվեստական ավանա-խի» խմբագրության հարցաթերթիկին պատասխանելիս Թումանյանն անդրադառնում է գաղութներում ստեղծված գրականության առանձ-նահատկությունները պայմանավորող պատմական հանգամանքնե-րին և գործոններին: Բանաստեղծը սահմանում է նախ ազգային և ապա համամարդկային լինելու գեղագիտական սկզբունքը, որն ըն-կած է ցանկացած գրականության զարգացման հիմքում. «Մինչև այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ոտի տակ, մեծ մա-սով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարա-զատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչև երկինք հասնի»<sup>3</sup>:

Այսպես՝ դեռևս իր ստեղծագործական կյանքի արշալույսին Թումանյանը արձանագրեց հայ գրական կյանքի երկփեղկվածությու-նը և այն պայմանավորեց ազգային-քաղաքական կյանքի, լեզվական և գեղարվեստական գործոնների օբյեկտիվ տարբերություններով: Մա-կայն Բանաստեղծը համոզված էր, որ անկախ ամեն ինչից անհրա-ժեշտ էր գաղթօջախներում ստեղծված գրականությունը ընկալել միև-նույն ազգային մշակույթի համատեքստում, քանի որ գրականության ճյուղերի փոխադարձ խորությունը և անձանդությունը «մի անբնա-

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 396:

կան ու աննորմալ երևոյթ է, որ վերացնելու առանձին հոգ պետք է ուենանք»<sup>1</sup>:

Թե՛ գաղթօջախներում, թե՛ հայ հողի վրա ստեղծվում էր հայության միևնույն ազգային-քաղաքական ձգտումներն արտահայտող գրականություն: Մասնավորապես ազատագրական շեփորը հնչեցնելու գործում ժողովրդի լայն զանգվածների վրա իր ազդեցությունն են թողնում նաև տարաշխարհիկ գրականության տաղանդավոր ներկայացուցիչները: Եվ Րաֆֆու ու Մ.Նալբանդյանի կողքին հայտնվում է նաև Ռ.Պատկանյանի անունը, ում ձայնը հաճախ հնչել է շատ ավելի ուժգին և հայրենասիրությամբ խանդավառել է վիթխարի չափերով: Ըստ բանաստեղծի՝ տարաշխարհիկ գրողները նույնպես խոսել են «Հայ ժողովրդի սրտի հետ, խոսել են նրա ցավի մասին»<sup>2</sup>: Թումանյանը չէր ժխտում տարաշխարհիկ գրողների ոչ տաղանդը, ոչ էլ նրանց գործի հայերենասիրական արժեքը: Նաև նրանց ստեղծած գրականության շնորհիվ թափ առավ 1890-ականների ազատագրական շարժումը, երևան եկավ մի սերունդ, որն իր վրա վերցրեց Արևմտյան Հայաստանն ազատագրելու սրբազան պարտականությունը: Թումանյանն ինքն այդ սերնդի լավագույն ներկայացուցիչն էր և, անշուշտ, ներշնչվել էր նաև տարաշխարհիկ պոեզիայով:

Հայտնի է, որ Ալեքսանդր Գոլոշյանով է սկսվում հայ ազատագրական շարժման նոր շրջափուլը: Նա երիտասարդ պոետի մտերիմ ընկերներից էր: Նրանք միասին էին խանդավառվել հայրենիքը ազատագրելու գաղափարներով<sup>3</sup>: Ինչպես հայ ազատագրական

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 531:

<sup>3</sup> 1885թ. Հովհ. Թումանյանը «Թող փչե քամին» երգի եղանակով բանաստեղծությունը նվիրում է Ալեքսանդր Գոլոշյանին: Վերջինս դառնում է նաև «Հին կոիվը» պոեմի հերոսի՝ Վահանի նախատիպը: Պոետը նվիրված էր դաշնակցական



շարժմանը նվիրված հայ երիտասարդությունը, այնպես էլ Ալ. Գուրշյանը և Թումանյանը գտնվում էին թե՛ տարաշխարհիկ, թե՛ բնաշխարհիկ հայրենասիրական գրականության՝ ինչպես Պատկանյանի, Շահ-զազիզի, այնպես էլ հատկապես Րաֆֆու ազգային ազատագրական գաղափարների ազդեցության տակ: Ճակատագիրը հրաշքով փրկեց պոետի կյանքը, նա կարող էր զոհվել Գուրշյանի հետ նույն օրը նույն վայրում<sup>1</sup>:

Հենց հայրենասիրությունն էր, որ հաղթահարում էր այդ երկու գրականությունների միջև եղած, հիրավի, միանգամայն ճիշտ նկատված տարբերությունները և դարձնում մեկ ազգի մեկ գրականություն:

---

Ռոստոմին: Պոետի ձեռագիրը կորավ այն պարկերի հետ, որոնք «Դաշնակցական գործով» հետապնդվող բանաստեղծի բնակարան ներխուժած պահնորդական բաժնի աշխատակիցները 1908թ. առգրավեցին ու տարան ոստիկանություն ու այլևս չվերադարձրեցին:

<sup>1</sup> Հովհ.Թումանյանն ու Ալ.Գուրշյանը որոշել էին Գևորգյան ճեմարանի սան, վանեցի Գուքասյանի ու Հովհաննես Ագրիպասյանի հետ զենքով գնալ ու ազատել Արևմտյան Հայաստանը՝ Երկիրը: Այդ նպատակով դեռևս նոր նշանված 19-ամյա պոետը վաճառում է իր ամառային վերարկուն և ձեռք բերած գումարով զենք գնում: Սակայն 1888թ. հուլիսին, երբ 4 երիտասարդներով պիտի մեկնեին Արևմտյան Հայաստան, անկողնուն գամված հիվանդ բանաստեղծը չի կարողանում միանալ ընկերներին և նրա գնալը հետաձգվում է: Սակայն պոետի երեք զինակից ընկերները զոհվում են Վան մեկնելու ճանապարհին՝ Չըխոր Գյոդուկ բնակավայրում: Թումանյանը ծանր է տանում գաղափարակից ընկերների կորուստը և վերանայում է Արևմտյան Հայաստանը ազատագրելու իր ռոմանտիկական ծրագրերը: Տե՛ս **Լեռ**, «Հայ հերոսներ», 1920, էջ 41-70: Տե՛ս նաև Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՄՄՀ ԳԱԱ հրատ. 1969, էջ 329:

# **TUMANIAN'S UNDERSTANDING OF THE LITERATURE OF DIASP**

(Summary)

**SUSANNA HOVHANNISYAN**

In his historical and philological works Hovhannes Tumanyan has touched the historical causes and circumstances of the continued for centuries emigration of Armenians. According to Tumanyan, the foreign environment could not have influenced the literature created there. Before Tumanyan, no one had spoken clearly about the peculiarities of literature created in the Armenian Diaspore and the motherland, which today have lost not only their historical but also their contemporary significance.

The poet was convinced that it was necessary to understand the literature created in the Diaspore in the context of the same national culture. Literature reflecting the same national-political aspirations of Armenians was created both in the Diaspore and on Armenian soil.